

Գիտական խորհրդի նախագահ՝

Լ.Ա.Սիբայելյան



**ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ, ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) հրատարակչության, լրատվության, տեխնիկական սպասարկման և հասարակայնության հետ կապերի բաժինը (այսուհետ՝ Բաժին) հանդիսանում է Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում:
- 1.2. Բաժինը ստեղծվում, վերակազմավորվում կամ լուծարվում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 1.3. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ԱՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի կառավարման մարմինների որոշումներով, Համալսարանի ռեկտորի հրամաններով, սույն կանոնակարգով:

2. ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1. Բաժնի հիմնական նպատակն է հասարակությանը տրամադրել Համալսարանի գործունեությանը վերաբերող լուրեր, ճշգրիտ և ստուգված փաստեր, Համալսարանի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում լուսաբանել բուհում իրականացվող կրթադաստիարակչական, գիտահետազոտական, վարչական, մշակութային աշխատանքները, ինչպես նաև կազմակերպել համալսարանի «Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիր» գիտական հանդեսի հրատարակումը:
- 2.2. Բաժնի խնդիրներն են՝
 - կազմակերպել և իրականացնել Համալսարանի տեղեկատվական և քարոզչական քաղաքականություն,
 - օժանդակել Համալսարանի գործունեության թափանցիկության ապահովմանը,
 - պատրաստել Համալսարանի գործունեության ոլորտներին առնչվող, հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ տեղեկատվական նյութեր,
 - իրագրել հասարակությանը Համալսարանի գործունեության մասին՝ shushi-tech.com կայքէջի միջոցով:

3. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- 3.1. Իրականացնել հոդվածների, ձեռնարկների և գրքերի խմբագրման, սրբագրման և թարգմանչական աշխատանքներ:
- 3.2. Համալսարանի տեղեկատվական քաղաքականության իրականացման նպատակով Համալսարանի ստորաբաժանումներից ստանալ համապատասխան տեղեկություններ և

նյութեր, անհրաժեշտության դեպքում հրապարակել, ինչպես նաև լուսաբանել Համալսարանում և դրանից դուրս անցկացվող համալսարանական իրադարձությունները:

- 3.3. Ապահովել Համալսարանի գործունեության թափանցիկությունը՝ shushi-tech.com կայքէջի միջոցով, ինչպես նաև կայքէջը հասանելի դարձնել արտերկրի օգտատերերին՝ կատարելագործելով օտար լեզվով տեղադրվող նյութերը:
- 3.4. Թարգմանել և կայքի միջոցով հրապարակել համալսարանական ռազմավարական փաստաթղթերի, կրթական ծրագրերի և միջազգայնացման ընթացակարգերի եռալեզու տարբերակները:
- 3.5. Իրականացնել Համալսարանում առկա համակարգչային սարքավորումների տեխնիկական սպասարկումը և ծրագրային ապահովումը, ապահովել տեղեկատվական ցանցի անվտանգ շահագործումը, իրագործել թվայնացման աշխատանքներ:
- 3.6. Հավաքագրել, մշակել և տարածել ուսումնական և գիտական անհրաժեշտ տեղեկատվությունը:
- 3.7. Կազմակերպել Համալսարանն արտաքին միջավայրում ներկայացնող և գովազդող տեղեկատվության ստեղծումն ու տարածումը:
- 3.8. Իրականացնել Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողների, մագիստրոսների, հայցորդների և ասպիրանտների համար համապատասխան ուսումնական և գիտահետազոտական ծրագրերի, դրամաշնորհների, կրթաթոշակների, մրցույթների, սեմինարների, գիտաժողովների մասին տեղեկատվության որոնման և տրամադրման աշխատանքներ, ինչպես նաև ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն այդ աշխատանքներում նրանց ընդգրկելու նպատակով:
- 3.9. Իրականացնել բաժնում ստացված էլեկտրոնային նամակների և տեղեկատվության տրամադրման աշխատանքները:
- 3.10. Կազմակերպել «Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիր» գիտական հանդեսի խմբագրման, սրբագրման և թարգմանչական աշխատանքները:
- 3.11. Պարբերաբար թարմացնել Համալսարանի պաշտոնական կայքէջում մոկա բաժինների և ենթաբաժինների տեղեկատվությունն ու ապահովել համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների և պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ տեղեկատվությունը:

4. ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

- 4.1. Բաժինը ղեկավարում է Բաժնի պետը, որը նշանակվում և ազատվում է պաշտոնից ռեկտորի հրամանով:
- 4.2. Բաժնի պետը կազմակերպում է Բաժնի աշխատանքները, հետևում կարգապահությանը և պատասխանատու է բաժնին հատկացված գույքի պահպանման համար:

5. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

- 5.1. Բաժնի գործունեությունը կարող է դադարեցվել, եթե այն իր գործունեությամբ չի ապահովում սույն կանոնակարգի պահանջները:
- 5.2. Բաժինը լուծարվում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գիտական խորհրդի նախագահ
Գիտական քարտուղար



Ն.Ա.Միքայելյան
Ա.Ա.Առաքելյան